

## Ջ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Հայ միջնադարյան կաֆաներ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ծրեան, 1975, 295 էջ

Հայ մատենագրության հետաքրքրական երևույթներից են կաֆա կոչված ոտանավորները, որոնք գրվում էին իբրև մի շարք արձակ (ինքնուրույն կամ թարգմանական) գործերի անմիջական արձագանք-ըրացում, մեկնություն կամ նրանց տրամաբանությունից ու տրամագրությունից բխող խոհ, խրատ:

Միջնադարյան այդ կարևոր գրական տեսակի հետազոտման առումով ուշագրավ է Հասմիկ Սիմոնյանի ներկա մենագրությունը: Զ. Սիմոնյանին կաֆաները հետաքրքրել են ամենից առաջ որպես գրական տեսակ: Եվ կաֆան իբրև այդպիսին դիտարկելն ու հետազոտելը, դրան նոր տեսանկյունից մոտենալը շատ բանով պայմանավորել է գրքի հաջողությունը:

Ներածություն մեջ ներկայացնելով հարցի պատմությունը և զնահատելով կատարվածը, հեղինակը իրավացիորեն է. Տաշյանի վաստակն այդ բնագավառում համարում է անզնահատելի: Զ. Տաշյանը կատարել է «կաֆաների գիտական դասակարգման առաջին փորձը», և նրա առաջադրած սկզբունքները ընդունելի են և այսօր (էջ 8—9): Գնահատելով նաև Գ. Հովսեփյանի, Ն. Անդրիկյանի, Ա. Չոպանյանի, Զ. Քյուրտյանի և Կրիշների ներդրումը, Զ. Սիմոնյանը եզրակացնում է. «...կաֆաների հրատարակության գործը մեզ որոշ վերապահումներով ներկայանում է համեմատաբար բավարար վիճակով, իսկ ուսումնասիրության գործն՝ ամբողջացման և հետագա խորացման կարոտ» (էջ 24): Այս վերջինն էլ եղել է գրախոսվող գրքի նպատակը:

Աշխատության առաջին գլուխը նվիրված է կաֆայի՝ որպես գրական տեսակի համակողմանի քննությանը: Երկրորդ-հինգերորդ գլուխներում հետազոտվում են Աղեքսանդր Մակեդոնացու, Պղնձե քաղաքի, Փահլավի թագավորի, Մանկան և աղջկա պատմությունների ու նրանց կաֆաների հետ կապված պատմա-բանասիրական, գրականագիտական մի շարք հարցեր: Սրանք այն արձակ երկերն են, որ թարգմանված կամ փոխադրված են հայերենի՝ սկսած V դ.: Թարգմանական կաֆաները համադրելով ու համեմատելով արաբական բնագրերի հետ, գրախոսվող աշխատության հեղինակը պարզում է, որ դրանց մի մասը ճշգրիտ թարգմանություն է, մնացածը՝ ազատ, մի մասն էլ՝ փոխադրություն:

Բուն հայկական պատմություններում ու զրույցներում տեղ գտած կաֆաներին է նվիրված հաջորդ՝ վեցերորդ գլուխը, ուր ուսումնասիրվում են «Պատմություն հայոց թագաւորին» զրույցը, նրա կաֆաները, Հովսեփ Սեբաստացու ինքնակա՝ այսինքն որևէ արձակ բնագրից անկախ, կաֆաները: Վերջին, յոթերորդ գլուխը՝ «կաֆաների զաղափարական բովանդակությունը և արվեստը», ընդգրկում է կաֆաների բանաստեղծական արվեստին փերաբերող ամենաբազմազան խնդիրներ ու առնչություններ:

Նպատակ ունենալով վերլուծել և արժեքավորել բանասիրությանը հայտնի և մինչև օրս անհայտ բազմաթիվ կաֆաներ (իբր մոտավոր հաշվումներով 5000 տող), Զ. Սիմոնյանը բացահայտել է նրանց ծագման, ձևավորման պատմությունը, վեր հանել այդ ոտանավորների բովանդակության ու ձևի յուրահատկությունները: Իսկ կաֆա գրել են Տրիկը, Մխիթարը, Խաչատուր Կեչառեցին, Հովսեփ Աղթամարցին, Գրիգորիս Աղթամարցին, Զաքարիա Գնունեցին, Հովսեփ Սեբաստացին և մի շարք անհայտ հեղինակներ: Զ. Սիմոնյանը մանրամասնորեն քննում և ճշգրտում է յուրաքանչյուրի կատարածը, բերելով համապատասխան ձեռագրական հիմնավորումներ ու Պլուսաններ:

Հայ բանաստեղծների «կաֆաների ներմուծումով» — նկատում է հեղինակը, — միջնադարյան թարգմանական զրույցները զաղափարական նպատակասլացության տեսակետից անհամեմատ շահել են: Նրանցում հրապարակ հանված հարցադրումները կաֆաների միջոցով դարձել են կոնկրետ, շոշափելի, իսկ բուն պատմությունները բանաստեղծական և հուզական նկա-

տելի երանգ են ստացել» (էջ 218)։ Նկատենք, որ վերոհիշյալ բանաստեղծներից Մխիթարը (XIII դ.) մինչ այժմ անհայտ է եղել բանասիրությանը իբրև կաֆաների հեղինակ։ Սակայն «Մխիթարի հորինած փոքրիկ կաֆայախումբը,— գրում է Հ. Սիմոնյանը,— յուրօրինակ տեղ է գրավում Պղնձե քաղաքի պատմության կաֆաների շարքում առաջին հերթին իր շոշափած թեմաների առումով։ Եթե կաֆա հորինող հեղինակներին արեւելյան այս գունազեղ զրույցի մեջ հրապուրել և բանաստեղծական ներշնչանքի աղբյուր է հանդիսացել աշխարհի ունայնության. վայելքների անցողիկության և աստվածային ամենակարողության խիստ միջնադարյան մտայնությունը, ապա Մխիթարը տալիս է քաղաքի, արքայական գահուլթի, առասպելական կենդանու երեանջայական նկարագրեր և բնության պատկերներ» (էջ 152)։

Հայ բանասիրության մեջ աչքաթող չի արվել մի այլ հանդամանք. Հ. Սիմոնյանը բերում է ն. Անգրիկյանի ենթադրությունը, ըստ որի՝ «Մկրտիչ Նաղաշը, Կոստանդին Երզնկացին և առհասարակ միջնադարյան տաղերգուները պետք է որ ստեղծագործական և գաղափարական որոշ ազդակներ ստացած լինեին ոչ միայն ժողովրդականացած Պղնձե քաղաքի պատմությունից, այլև ժամանակի ընթացող հասարակությանը քաջածանոթ՝ «Հազար ու մի գիշեր» հեքիաթաշարից ընդհանրապես» (էջ 12)։ Առանձնահատուկ հետաքրքրություն ունի այդ տեսակետից այնպիսի մի աշխարհիկ ստեղծագործություն, ինչպիսին Աղեքսանդրի պատմությունն է, որ ուղղակի և անուղղակի թվերով առնչվում է ինչպես դասական շրջանի հայ մատենագրության, այնպես էլ Գրիգոր Մագիստրոսի, Ներսես Շնորհալու և հետագայի այլ գործիչների հետ։

Նշելով, որ Պղնձե քաղաքի պատմության հետ կապված շատ հարցեր մնում են լուծված, հեղինակը նկատում է, թե «Յժամանակի կլինի Պղնձե քաղաքի պատմության հայերեն թարգմանության քննական բնագրի հրատարակումը» (էջ 139), որը ճիշտ դիտողություն է։

Ինչպե՞ս է այն հանգամանքը, որ մի քանի կաֆաներ սերտ կապ ունեն միջնադարյան բժշկագիտական գրականության հետ։ Դեռևս Ղ. Հովնանյանը նկատել էր, որ Աղեքսանդրի պատմության կաֆաներից մեկը առնչվում է բժշկագետ Պունիաթ Սեբաստացու խրատների հետ։ Այս առումով թերևս ավելի նշանակալից է Հ. Սիմոնյանի մատնանշած փաստը. «Պատմութիւն հայոց թագաւորիս» զրույցի կաֆաների՝ մի այլ նշանավոր բժշկագետի՝ Ամիրզովլաթ Ամասիացու «Յժամանակի բժշկութեան» աշխատության հետ ունեցած աղբյուրները, որոնց շնորհիվ որոշ շահիտ է ճշտվում է նաև Պատմության գրության ժամանակը, կաֆայի հեղինակը շահիտ Վերաշաքարել է Ամիրզովլաթի որոշ մտքերը։ «Պատմութիւն հայոց թագաւորիս» զրույցի «...բնագրում կաֆաների ունեցած հերթականությունը ևս համընկնում է Ամիրզովլաթ Ամասիացու գրքի համապատասխան հատվածների հաջորդականությանը՝ լրացր. թոք, փայծաղ, երիկամ, լեղի, բուռն» (էջ 201),— գրում է Հ. Սիմոնյանը և համապատասխան քաղվածքներով հաստատում ասածը։

Ամփոփելով իր խոսքը միջնադարյան հայկական կաֆաների մասին, հեղինակը նշում է գրանց տեղը հայ մատենագրության մեջ և դիտում, թե՛ «...իրենց բովանդակած հարցերով ու արվեստով կաֆաները մեծապես նպաստել են միջնադարյան գրականության և մասնավորապես բանաստեղծության առաջընթացին՝ յուրովի արձագանքելով հասարակական և գրական կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններին։ Եվ, հիարավի, կաֆաների մեջ արտացոլվել են ժամանակի գրականության բոլոր առանցքային թեմաները՝ հայրենասիրություն, անկախություն և ինքնորոշման քաղաքական տենչանք, մահվան և ունայնության միջնադարյան պրոբլեմ, սեր ու բնություն, աշխարհասիրություն, մարդ-անհատի հոգեկան աշխարհի նկարագիր և այլն» (էջ 272)։ Ինչպես մի շարք կարևոր եզրակացություններ, այնպես էլ այս պնդումը, հնարավոր են դարձել հեղինակի նոր մտտեցման շնորհիվ։ Այդ մտտեցման հետ է կապված նաև «կաֆա» քաղաքիչով մի քանի նորաբանությունների առկայությունը գրախոսվող քոթում (կաֆայավոր(ել), կաֆայախումբ, կաֆայաշարք, կաֆայագիր և այլն)։

Կաֆաների կարևորագույն հատկանիշը, ասում է Հ. Սիմոնյանը, «սերանց կիրառության որոշորի. յուրահատկությունն է» (էջ 34), (այսինքն՝ այն, որ դրանք ապոքս են գաղի արձակ բնագրերի մեջ), ապա՝ կառուցվածքը և տաղաչափությունը։

Հիճե՛լի է լվում «կաֆաների ժանրային յուրահատկությունները» դիտում ոտանավորի այդ տեսակին տրված սահմանումը, թեև մինչև այժմ եղածների մեջ դա ամենից ավելի ամբողջականն է։ Հ. Սիմոնյանը կաֆաները սահմանում է հետևյալ կերպ. «...գեղարվեստական արձակ ներմուծված հատուկ երգեր՝ հիմնականում 15 վանկանի նույնահանգ բանաստեղծով և քառյակային-ութնյակային ավարտուն բովանդակությամբ, որոնք արտահայտում են ամենաբազմազան իմաստներ» (էջ 37)։

Կաֆան իրրև զրական տեսակ երբեմն միայն հարևանցիորեն է սահմանվել: Այս առումով շատ կարևոր է Ն. Սիմոնյանի փորձը: Բայց մեզ թվում է այստեղ զիտակցարար անտեղծած է մի կարևոր հանգամանք, որով սահմանումը մնում է թերի: Եվաֆաների համար,— գրում է Ն. Սիմոնյանը.— կարևոր են արտաքին հատկանիշները՝ կապված տաղայափության, քառակային ավարտուն բովանդակության, տողաքանակի և այլնի հետ: Երկրորդական է նրանց թեմատիկ կողմը կամ բովանդակությունը այն պարզ պատճառով, որ կաֆաների միջոցով լավասար զորությունը և հաջողությունը կարելի է արտահայտել և՛ խոհը, և՛ ողբը, և՛ հերոսական տրամադրությունը, և՛ երգիծանքը, և՛ խրատը» (էջ 84):

Մինչդեռ Տիշտ է նկատված բանասիրության մեջ, որ հայոց միջնադարյան զրականությունն այս հարցում տարբեր է նորից. եթե հնում տեսակները բնորոշվում էին բացառապես բովանդակային սկզբունքով, ապա նոր ժամանակներում, հաճախ, առաջնություն է ստանում բարտաքին, ձևական հատկանիշը: Կարծում ենք, որ կաֆան բացառությունն չէ:

Եթե վերանանք կաֆայի ներկա սահմանումից ու փորձենք գտնել նրա հիմնական, ամենակարևոր, ամենարևութագրական կողմը, դա կլինի աշխարհի ունայնության գաղափարի տարփողումը, ինչպես Ն. Սիմոնյանը կասեր, զոչյման, սպառնալից և հոգեկոտ կյանքի փառաբանումը: Ընդ որում, կաֆաների մեջ չկա նկատելի թեմատիկ բազմազանություն. գրեթե բոլորի առանցքն ու իմաստը հանգում է հենց առնայնություն ունայնությանը՝ հայտնի քանաձևին, որով յի արժեքը կվում կաֆան:

Քանի որ զրական այս տեսակը հայ զրականության մեջ ինքնուրույն չէ, սահմանելիս լավ կլինենր ուշադրություն դարձնել նաև օտար զրականությունների, հատկապես արաբական զրականության մեջ այդ տեսակին տրվող սահմանումներին:

Կարևոր էր նաև կաֆա պարունակող բոլոր բնագրերի ընդ որ տվյալների գույքագրումը: Համեմատությունը կաֆաները մեջբերվում են հիմնականում երեք հորոքրյումով՝ ռըր, քան, լըրատ: Արդյոք սրանք կաֆայի տիպերի յուրատեսակ բնորոշումներ չե՞ն: Պատահական է, որ Գրիգոր քահանան Գրիգորիս Աղթամարցու մասին խոսելիս գրում է. «ե՞ջ ռըր յիւմէն առեալ է սայ» (էջ 106), Սրա հետ համեմատելի է Յրիկի մի տաղը, որը կրում է հետևյալ ուշադրավ խորագիրը. «Այլ բանք Յրկանն ասացեալ. Անցաւ ի տաճիկ հողվարքն և տեսաւ զոսկերս մեռելոցն ցրտեմ յարեն և ասաց. ողբ ի վերայ մահու՛ յազգա զզուշանալոյ մարդկան»,— գրում է Ն. Սիմոնյանը (էջ 188): Այս տողը-երը և շուրջապի Սեբաստացու «Եվաֆայ վասն աղէկ մանկանն Գրիգորի» վերնագրում ընդգծված բառը հոմանիշ չե՞ն ըստ էության: Վերջինս, ի դեպ, ավարտվում է կաֆաներին բնորոշ եզրահանգումով.

Գնայ, հոգայ զքեզ, հոգիս,  
 Մի լինիր դու անհոք ի քուն,  
 Գեմ քան զթարթիլն ական  
 Մահն ի մաւտ է աղամորդուն:

Ի միջի այլոց, այս բանաստեղծությունը Ն. Սիմոնյանը կոչում է տղարխառն ոտանավոր» (էջ 209), նկատենք, որ այս ողբերը, որ փոքրիկ քնարական ոտանավորներ են, չպետք է շփոթել նույն անունով հայտնի զրական տեսակի հետ, որն ավելի ծավալուն է և բնութագրվում է քնարական ու վիպական տարրերի առկայությամբ:

Կարծում ենք, Ն. Սիմոնյանը հետազայում առիթ կունենա անդրադառնալու կաֆայի սահմաններ և ավելի կուտ ու ամբողջական կզարձնի այն: Եվ որովհետև նախորդ սահմանումները (հատկապես ուշադրության արժանի են խոյի և ն. Ակինյանի դիտողությունները, որ բերված են գրախոսվող աշխատության 30-րդ էջում) ոչ թե սխալ, այլ միակողմանի էին, Ն. Սիմոնյանը դրանք չպետք է մերժեր լիովին, այլ՝ համազրբեր:

Գրքում կան այլ թերություններ, կրկնություններ, որոնք սկզբունքային արժեք չունեն: Իր ամբողջության մեջ Հասմիկ Սիմոնյանի «Շայ միջնադարյան կաֆաներ» աշխատությունը կարևոր ներդրում է միջնադարի քնարերգության ուսումնասիրության ասպարեզում:

Ա. Գ. ՄԱՌՈՅԱՆ.  
 Բաճախիւակաճ գիտությունների քննկառման